

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«13» դեկտեմբերի 2018թ., թիվ 8

«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԽՈՐՀՐԴԻ 09.08.2018թ. ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը, «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի օգոստոսի 9-ի թիվ 6 որոշումը, 2018 թվականի դեկտեմբերի 13-ի «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի թիվ 6 արձանագրությունը, Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Լրացումներ կատարել «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի կողմից 2015 և 2016 թվականներին տեղի ունեցած դեպքերի հատուցման գումարների վճարման մասին» Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի խորհրդի 09.08.2018թ. թիվ 6 որոշման մեջ՝ ավելացնելով 4.1 և 6.1 կետերը՝ հետևյալ բովանդակությամբ.
«4.1. 2015-2016թթ.-ին տեղի ունեցած դեպքերի մասով անուփտետային վճարների հաշվարկները կատարելիս, Հիմնադրամի կողմից տրամադրվող հատուցման գումարից չմասհանել «Զինվորական ծառայության և

զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա տրվող պարզևավճարները:

6.1. Սույն որոշման 6-րդ կետով սահմանված ամսական 100 000 դրամ լրացուցիչ գումարը տրամադրել ամբողջությամբ, անկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կենսաթոշակային ապահովության շրջանակներում զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին վճարվող ընդհանուր գումարի չափից»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնում ընդունման օրվանից:

**Ձինծառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝**

Դավիթ Տոնոյան